ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Ստացա Ձեր հեռագիրը, որով հղում եք ինձ Ձեր օրհնությունը՝ հայտնելով Ձեր շնորհավորանքն ու բարեկամական զգացումները իմ ընտրության առիթով որպես Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար: Մեծապես զգացված եմ և հայտնում եմ Ձեզ իմ խորին շնորհակալությունը:

Ապավինում եմ Ձերդ Սրբության բարեխոս աղոթքներին՝ անսայթաք ընթանալու համար իմ կոչման և առաքելության ճանապարհի վրա:

Հաճույքով եմ հիշում միշտ իմ այցելությունը Ս. Էջմիածին մի քանի տարիներ առաջ: Այդ այցելությունը մեծ առանձնաշնորհում եղավ ինձ համար և թանկագին պատեհություն ընձեռեց ինձ՝ գտնվելու ձեր Եկեղեցու հոգևոր կենտրոնում և ձեր հավատացյալ ժողովրդի հետ մասնակից լինելու ձեր աղոթքին և ծեսին: Այդ բոլորը ձեր Առաքելական Եկեղեցու մեծ նպաստն է քրիստոնյա աշխարհին:

Հույս ունեմ, որ մոտ ապագայում առիթ կունենաք այցելելու Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոն, որպեսզի ձեր Եկեղեցու հոգևոր շնորհները բաշխվեն նաև էկումենիկ կենտրոնի իմ բոլոր գործընկերներին:

Մի անգամ ևս իմ անկեղծ շնորհակալությունն եմ հայտնում Ձերդ Սրբությանը՝ ներկայացնելով Ձեզ Ձեր խոնարհ ծառայի և նրա ընտանիքի բարեխոսության աղոթքի և քրիստոնեական համերաշխության հավաստիքը:

ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈ

Ժնև,
13 օգոստոսի 1984 թ.